

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՊԵՏԱԿԱՆ ԳԱՐՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

Գոռ ԵՆԳԻԲԱՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Ազգային անվտանգության ապահովումը եղել և մնում է պետության կարևորագույն գործառնություններից մեկը:

Գոյություն ունեն ազգային անվտանգության հասկացության բազմաթիվ բնորոշումներ, սակայն թե՛ տեսական, թե՛ գործնական մշակումներում որպես հիմք է ընդունվում նախ և առաջ դրա իրավաբանական սահմանումը: ՀՀ օրենսդրության մեջ այն իր տեղն է գտել 2001թ. դեկտեմբերի 28-ին ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում: **«ՀՀ ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շոջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից»:**

Այդպիսով, ազգային անվտանգությունը, փաստորեն, անձի, հասարակության և պետության կենսական փոխկապակցված շահերի ապահովվածության վիճակն է: Հնարավոր չէ պատկերացնել անձի անվտանգությունն առանց պետական և հասարակական անվտանգության, և չեն կարող անվտանգ լինել այն հասարակությունն ու պետությունը, որտեղ վտանգված են անձի կենսական շահերը, նրա իրավունքներն ու

ազատությունները: Այս առումով՝ իրավացի պետք է համարել արևմտյան երկրներում տարածված տեսակետը, որն ամփոփ ձևակերպել է Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը. **«Առանց ազգային անվտանգության հիմնախնդիրների լուծման հնարավոր չէ խոսել մարդու իրավունքներից և ընդհանրապես ժողովրդավարության զարգացումից»:**

Անձի, հասարակության և պետության անվտանգության մակարդակը (ապահովվածության և պաշտպանվածության) մեծապես կախված է պետական և հասարակական բոլոր կառույցների (տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական, տեղեկատվական և այլն) գործունեությունից: Հետևաբար, ազգային անվտանգության համակարգը ձեռք է բերում բարդ կառուցվածք, որում կարելի է առանձնացնել բաղկացուցիչ մասեր, ենթահամակարգեր: Լայն ընդգրկման շնորհիվ դրանք նույնպես հաճախ դիտվում են որպես առանձին համակարգեր: Անդրադառնանք դրանցից մեկին՝ տեղեկատվական անվտանգության համակարգին:

Ժամանակակից պայմաններում անձի, հասարակության և պետության տեղեկատվական անվտանգությունն ընդունված է պատկերացնել որպես չորս բաղադրիչների միասնություն: Դրանք են՝ 1) հոգևոր-մշակութային անվտանգությունը, 2) տեղեկատվական-հոգեբանական անվտանգությունը, 3) պետական և օրենքով նախատեսված այլ գաղտնիքի պահպանությունը, 4) տեղեկատվական-տեխնիկական անվտանգությունը (այլ կերպ՝ համակարգչային անվտանգությունը կամ կիբեռանվտանգությունը)³:

Գործնականում ներառելով մարդու բանական ողջ գործունեությունը, հոգևոր աշ-

խարհը, նրա ստեղծած մշակութային, գիտական, տեխնիկական, տեխնոլոգիական և այլ համապարփակ հարստությունը՝ տեղեկատվական համակարգը վճռորոշ ազդեցություն է թողնում հանրային գիտակցության, պետական և հասարակական կյանքի բազմազան կողմերի վրա: Գիշտ է նկատված, որ **«այսօր տեղեկատվական համակարգի զարգացման մակարդակից մեծապես կախված է ցանկացած պետության և ազգի քաղաքական, գաղափարախոսական, հոգեբանական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտների անվտանգությունն ու հետագա առաջընթացը»**: Ավելացնենք, որ տեղեկատվական համակարգի զարգացման մակարդակով են պայմանավորված նաև անձի անվտանգությունն ու հետագա զարգացումը: Ի վերջո, տեղեկույթը, ինչպես էլ այն սահմանվի օրենքներում, մեկնաբանվի մասնագիտական գրականության մեջ, սովորական կյանքում եղել է, կա և լինելու է անձանց հաղորդակցման, շփման պարտադիր և անփոխարինելի միջոց, ու դրա որակից, արժանահավատությունից է նաև մեծապես կախված, թե որքանով են իրավահավասար և արդյունավետ սոցիալական հարաբերությունները, ինչը մարդկային զարգացման կարևորագույն գործոններից մեկն է:

Տեղեկույթի ստեղծման, ձեռքբերման, փոխանցման և օգտագործման ընթացքում ձևավորվող հասարակական հարաբերություններն պետք է ենթարկվեն բազմակողմանի և ժամանակակից պահանջները բավարարող օրենսդրական կարգավորման: Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը՝ որպես քաղաքական փաստաթուղթ, նման կարգավորման հիմքն է միայն, ուղեցույցը: Խոսքը տեղեկատվական անվտանգության ոլորտում նորմատիվ-իրավական դաշտի ստեղծման մասին է, և պետք է նշել, որ այդ ուղղությամբ հանրապետությունում կատարվել են կարևոր քայլեր. ընդունվել են ոլորտին առնչվող «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Անհատական տվյալների մա-

սին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին», «Արխիվային գործի մասին», «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքները: Եական նշանակություն ունեցավ նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից «Կիրեռիանցագործությունների մասին» Եվրախորհրդի կոնվենցիայի և այդ կոնվենցիային կից «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» լրացուցիչ արձանագրության վավերացումը:

Քննարկման փուլում է նաև «Տեղեկույթի պաշտպանության մասին» (այլ խմբագրությամբ՝ «Տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության մասին») օրենքի նախագիծը: Այդ օրենքի ընդունումով, թերևս, կամբողջացվի մեր երկրում տեղեկույթի պահպանության և պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրությունը:

Այնուամենայնիվ ակնհայտ է, որ ազգային անվտանգության ու դրա բաղկացուցիչ մաս կազմող տեղեկատվական անվտանգության ոլորտում առկա են լուրջ հիմնահարցեր ինչպես ծագող հարաբերությունների իրավական կարգավորման, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի կատարելագործման ասպարեզում:

Նախ՝ որոշակի իրավական վակուում է առաջացրել «Ազգային անվտանգության մասին» (կամ «Անվտանգության մասին») ՀՀ օրենքի բացակայությունը, որը պետք է սահմանի ոլորտի հիմնական հասկացությունները, կարգավորման սկզբունքներն ու հիմնադրույթները: Ժամանակին՝ դեռևս «Ազգային անվտանգության ռազմավարության» (հաստատվել է ՀՀ նախագահի 07.02.2007թ. ՆՀ-37-ն իրամանագրով) մշակման փուլում, հնչել են կարծիքներ, որ այն պետք է վերափոխել օրենքի, սակայն փաստաթուղթը կազմող միջգերատեսչական հանձնաժողովը առաջարկել է այն ընդունել ՀՀ Նախագահի իրամանագրով: Հաշվի են առնվել նման քաղաքական փաստաթղթի ընդունման համաշխարհա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

յին փորձը (ՌԴ, ԱՄՆ և այլ երկրներ) և այն մտավախությունը, որ տվյալ շրջանում փաստաթղթի **«Կերպափոխումը օրենսդրական ակտի կարող էր զսպաշափիկ դառնալ քաղաքացիական հասարակության կայացման, ընդհանուր առմամբ՝ Հայաստանի ժողովրդարացման համար»⁵:**

Ընդունելով այս հայեցակետը որպես ժամանակի թելադրանք, որը **«բխում էր մեր ազգային անվտանգության շահերի ռեալ քաղաքական հաշվարկումից»⁶**, միաժամանակ չի կարելի անտեսել «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը, որն օր օրի ավելի է հասունանում երկրում ժողովրդավարական զարգացումներին զուգընթաց: Նույնը պետք է ասել «Տեղեկության պաշտպանության մասին» օրենքի վերաբերյալ («Տեղեկատվության ազատության մասին») ՀՀ օրենքն այսօր չի համապատասխանում ժամանակակից պահանջներին, այնտեղ անգամ տրված չէ տեղեկատվության (տեղեկության) իրավաբանական սահմանումը, չկան տեղեկատվության դասակարգման, դրա պաշտպանությանը վերաբերող կոնկրետ դրույթներ և այլն):

Հիշյալ օրենքների ընդունման պահանջն ուղղակիորեն թելադրված է այն հիմնական ուղղություններով, որ այսօր առկա են տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում:

Փորձենք ներկայացնել այդ ուղղությունները՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգի» (հաստատվել է ՀՀ նախագահի 26.06.2009 թ. ՆԿ-97-ն կարգադրությամբ, այսուհետ՝ Հայեցակարգ) հետևյալ դրույթը. **«Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ»** (գլուխ 2)⁷:

Տեղեկատվական ոլորտում անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահն առաջին հերթին ենթադրում է նրանց ապահովումը ժամանակին հաղորդվող և հուսալի տեղեկատվությամբ, առանց որի հնարավոր չէ որևէ առաջընթաց: Ընդ որում՝ ապահովումն այստեղ, ինչպես ազգային անվտանգության պարագայում, պետք է կրի ակտիվ բնույթ, այսինքն՝ ներառի ակտիվ գործողություններ (մասնավորապես քարոզչության միջոցով)՝ ուղղված տեղեկատվական ոլորտում ազգային շահերի բավարարմանը: Նման մոտեցման համար հիմք կարող են ծառայել նաև Հայեցակարգում ամրագրված՝ տեղեկատվական ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային շահերի բաղադրիչները, որոնք ընդհանրական ձևով կարելի է ներկայացնել այսպես.

- քաղաքացիների տեղեկատվական ազատության իրավունքի ապահովում.

- հասարակության բարոյական արժեքների, հայրենասիրական և մարդասիրական ավանդույթների, մշակութային և գիտական ներուժի ամրապնդում.

- ՀՀ պետական քաղաքականության տեղեկատվական ապահովում:

Հատկանշական է, որ վերջիններիս դեմ ոտնձգությունները նույն փաստաթղթում դիտվում են որպես ՀՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների առանձին տեսակներ (գլուխ 3):

Տեղեկատվական անվտանգության ապահովման առաջնային և առավել ընդհանուր ուղղությունը տեղեկատվության ազատության ապահովումն է: Նկատենք, սակայն, որ տեղեկությունը, այդքան կարևոր դեր խաղալով հանդերձ, կարող է նաև վնասել հասարակական հարաբերություններին, հատկապես երբ այն վերաբերում է ազգային անվտանգության ոլորտին: Խոսքն առաջին հերթին խեղաթյուրված կամ կեղծ տեղեկության ներդրման մասին է: Հայեցակարգում, դիցուք, ուղղակի սպառնալիք է դիտվում նաև **«տեղեկատվական ապակողմնորոշումը ապատեղեկատվության, կեղծ և խեղաթյուրված տեղեկատվության տարածման միջոցով»** (գլուխ 3):

Ազգային շահերի համար ոչ պակաս վտանգ են ներկայացնում նաև նպատակաուղղված բացասական տեղեկատվական ազդեցությունները: Խոսքն այստեղ այն ազդեցությունների մասին է, որոնք, ինքնին չհանդիսանալով կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն, այդուհանդերձ կարող են դիտավորյալ սխալ ներկայացվել՝ էական վնաս պատճառելով հոգևոր-մշակութային, տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում ՀՀ ազգային շահերին: Հայեցակարգում դրանք նույնպես դիտվում են որպես տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված կոնկրետ սպառնալիքներ: Այդպիսիք են՝

- հայ հասարակության մեջ արմատավորված արժեքներին անհարիր հոգևոր, բարոյական այլ արժեքների և բռնության պաշտամունքի վրա հիմնված զանգվածային մշակույթի օրինակների քարոզչությունը.

- հոգևոր արժեքների արժեզրկումը, հայոց լեզվի, հայկական մշակույթի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի թուլացումը.

- Հայաստանի ազգաբնակչության հոգևոր, բարոյական և ստեղծագործական ներուժի թուլացումը (գլուխ 3):

Մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ **«նպատակաուղղված տեղեկատվական ազդեցությունները կարող են ունենալ հեռուն զնացող ապակառուցողական (դեստրուկտիվ) հետևանքներ ինչպես առանձին անհատի, հասարակության, պետության, այնպես էլ քաղաքակրթության ինքնին գոյության համար»**»:

Մյուս կողմից՝ տեղեկացվածությունն ունակ է զգալիորեն մեծացնելու քաղաքական, ռազմական և այլ բնույթի որոշումների ու գործողությունների արդյունավետությունը, որոշակի տեղեկությունների տիրապետելը ի գորու է հզորացնելու հակամարտության մի կողմին և թուլացնելու մյուսին: Ինչպես հին քրմերն էին ասում. «ով տիրապետում է տեղեկատվությանը, նա տիրում է աշխարհին»: Այդ պատճառով նշված բնույթի տեղեկությունները ենթակա են պետական հատուկ պաշտպանության:

Հայեցակարգում տեղեկատվության ոլորտում ազգային շահերի հինգերորդ բաղադրիչը ներառում է «տեղեկատվական ռեսուրսների պաշտպանվածությունը չթուլատրված հասանելիությունից, տեղեկատվության, կապի և հեռահաղորդակցության համակարգերի անվտանգության ապահովումը»: Այդ նպատակով անհրաժեշտ է համարվում «բարձրացնել Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների, ֆինանսական, բանկային համակարգի, տնտեսական գործունեության ոլորտի, զինուժի, կառավարման, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից վտանգավոր և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող արտադրությունների տեղեկատվական անվտանգության համակարգերի և կապի առաջնային ցանցերի պաշտպանվածության մակարդակը, զարգացնել տեղեկատվության պաշտպանության սարքավորումների և ծրագրային միջոցների հայրենական արտադրությունը, բարձրացնել դրանց գործունեության վերահսկման արդյունավետությունը, ապահովել պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության պաշտպանությունը» և այլն (գլուխ 2):

Այսպիսով, տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կարելի է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

– տեղեկույթի ազատության ապահովում.

– ապատեղեկատվության արգելափակում.

– տեղեկատվական բացասական ազդեցությունների չեզոքացում.

– որոշ տեղեկությունների շրջանառության նկատմամբ օրենքով սահմանված սահմանափակումների կիրառում (դրանց պաշտպանություն արտահոսքից):

Դժվար չէ նկատել, որ տեղեկույթի հսկայական զանգվածում իրենց առանձնահատուկ տեղն ունեն այն տեղեկությունները, որոնց շրջանառության նկատմամբ տեղեկատվական անվտանգության ապահովման նկատառումներով անհրաժեշտ է կիրառել սահմանափակումներ և պաշտպանել դրանք արտահոսքից: Այս ոլորտում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ձևավորվող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը պետք է իրականացվի տեղեկույթի պաշտպանությանը ներկայացվող պահանջների իրավաբանական սահմանման, տեղեկույթի, տեղեկատվական տեխնոլոգիաների պաշտպանության հստակ կառուցակարգեր մշակելու և, անշուշտ, տեղեկատվական ոլորտի օրենսդրության խախտումների համար պատասխանատվության համակարգ հաստատելու ճանապարհով: Այս համատեքստում առանձին կարևորություն է ստանում պետական գաղտնիքի՝ որպես տեղեկատվության հատուկ տեսակի պաշտպանությունը:

Ընդհանրապես, տեղեկությունների շրջանառության ժամանակ ձևավորվող իրավահարաբերությունների համակարգում պետական գաղտնիքին վերապահված են առանձնահատուկ դեր և նշանակություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների մեր դարաշրջանում, երբ հասարակության մեջ տեղեկույթը դառնում է ամենահիմնական արժեքավոր ռեսուրսներից մեկը, պետական գաղտնիքի սահմանակարգի դերն ու նշանակությունը կարևորվում են առանձնապես:

Թեև գլոբալ առումով այսօր աշխարհում հաստատված է խաղաղ գոյակցություն, այդուհանդերձ դա չի բացառում տարբեր երկրների, հատկապես մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերի բախում, ինչը երբեմն հանգեցնում է քաղաքական և տնտեսական հակամարտությունների: Այս իրողությունը, բնականաբար, իր հերթին հանգեցնում է տեղեկատվական ռեսուրսների ձևավորման և պաշտպանության ոլորտում ծագող հիմնահարցերի սրման: Եվ չնայած այն բանին, որ սառը պատերազմի ժամանակների համեմատ ներկայումս միջպետական հարաբերություններն ավելի թափանցիկ են, օրենսդրությամբ պաշտպանվող տեղեկությունների ծավալները վիթխարի են մնում: Դրանց մի հսկայական զանգված դասվում

է պետական գաղտնիքի շարքը:

Հարավային Կովկասը հատկապես վերջին տարիներին հայտնվել է տարբեր պետությունների աշխարհաքաղաքական շահերի բախման կիզակետում, և Հայաստանը չէր կարող չզգալ դրա անմիջական հետևանքները: Կոնկրետ Հայաստանի պարագայում ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիքներին (քաղաքական համակարգի անկատարություն, ժողովրդավարության արմատավորման ոչ բավարար մակարդակ, ժողովրդագրական բացասական միտումներ և այլն) և արտաքին սպառնալիքներին (օտարերկրյա հատուկ ծառայությունների հետախուզական գործունեություն և այլն) գումարվում են այնպիսի արտաքին սպառնալիքներ, ինչպիսիք են՝

- **ՀՀ-ի և ԼՂՀ-ի հանդեպ զինված ուժ կիրառելու բացահայտ սպառնալիքներն Ադրբեջանի կողմից.**

- վերջինիս ու Թուրքիայի կողմից Հայաստանի տևական շրջափակումը.

- հանրապետության մեկուսացումը տարածաշրջանային ծրագրերից և այլն⁹:

Այս ամենը Հայաստանին թելադրում է յուրահատուկ պայմաններ, որոնք պահանջում են ազգային-պետական անվտանգության պաշտպանությանն ուղղված արտակարգ միջոցներ: Այս համատեքստում հանրապետության անվտանգության ապահովումը տեղեկատվական, այդ թվում՝ պետական գաղտնիքի ոլորտում, ստանում է առանձնահատուկ ռազմավարական նշանակություն:

Ակնհայտ է, որ համաշխարհային զարգացման ներկա փուլը, որի բնորոշ առանձնահատկություններից են պետությունների փոխներթափանցելիությունը, «առանց սահմանների» կարգախոսով իրականացվող միջազգային տարաբնույթ ձեռնարկումները, հրամայաբար պահանջում է կտրուկ փոփոխություններ մտցնել անվտանգության ընկալման ավանդական պատկերացումների մեջ: Գիշտ է նկատված, որ **«Եթե նախկինում վճռորոշ էին պետությունների մրցակցության ոչ միայն ռազմական, այլև քաղաքական, տնտեսական**

հնարավորությունները, ապա այսօր առաջ են եկել նաև նոր չափանիշներ, որոնք պայմանավորում են պետության տեղեկատվական ոլորտի անվտանգության տեղն ու դերը երկրի ազգային անվտանգության համատեքստում» (Հայեցակարգի ներածություն):

Ասվածը լիովին վերաբերում է ազգային և տեղեկատվական անվտանգության մաս կազմող պետական գաղտնիքի սահմանակարգին: Կարծում ենք՝ դժվար է վիճելի համարել այն դիտարկումը, որ խորհրդային տարիների իներցիայով այսօր էլ հասարակական որոշ խավերի կողմից «պետական գաղտնիք» հասկացությունն ընկալվում է որպես մի ինչ-որ արտառոց բան՝ պատված խորհրդավորության քողով, որի մասին խոսելն իսկ պահանջում է հատուկ զգուշավորություն: Իրականում, սակայն, զգուշ և զգոն պետք է լինել բուն պետական գաղտնիքի պահպանության և պաշտպանության նկատմամբ, իսկ «պետական գաղտնիք» հասկացությունը հանրային գիտակցության մեջ պետք է արմատավորել որպես անձի, հասարակության և պետության կենսական կարևորագույն շահերի պաշտպանության կառուցակարգ, որը գործում է աշխարհի բոլոր ժողովրդավարական երկրներում:

Պետական գաղտնիքի բուն էության, դերի և նշանակության թյուրըմբռնումը, չգիտակցված, ոչ պատշաճ մոտեցումը պետական գաղտնիքի սահմանակարգին արդեն իսկ սպառնալիք են ազգային անվտանգությանը, իսկ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների արտահոսքը՝ նաև նյութական կորուստ պետության, ուրեմն և անձի ու հասարակության համար, քանի որ ամեն մի պետական գաղտնիքի ետևում ֆինանսական և նյութական միջոցներ են, գիտատեխնիկական ծախսատար աշխատանք: Փորձենք առանձնացնել պետական գաղտնիքի ժամանակակից ընկալման և դրա սահմանակարգի ձևավորման հետ կապված մի քանի հայեցակարգային մոտեցումներ, որոնք ընդունված են առաջատար ժողովրդավարական երկրներում, և որոնք, կարծում ենք, ընդունելի են նաև մեզանում:

1. Պետական գաղտնիքի իրավունքն ինքնիշխան պետության անբակտելի իրավունքն է: Դրա իրականացումը պետական գործառույթ է և ազգային անվտանգության ոլորտի պետական կառավարման անբաժանելի մասը:

Անշեղորեն պաշտպանելով մարդու իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ տեղեկատվության ազատության իրավունքը՝ պետությունն իրավասու է անձի, հասարակության և իր իսկ կենսական շահերից ելնելով ազատ շրջանառությունից հանել որոշակի կարգի (կատեգորիայի) տեղեկություններ և դրանք դասել պետական գաղտնիքի շարքը:

Ասվածի իրավական հիմքը ՀՀ Սահմանադրության դրույթն է այն մասին, որ մարդու և քաղաքացու սահմանադրական որոշ իրավունքներ և ազատություններ, այդ թվում տեղեկատվության ազատության իրավունքը, «կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար» (հոդված 43):

2. Պետական գաղտնիքի սահմանակարգը տեղեկատվական ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման սահմանակարգ է: Պետական գաղտնիքը տեղեկատվական ոլորտի հասարակական հարաբերությունների օբյեկտ է: Ոչ ոք իրավունք չունի արգելափակելու տեղեկատվության ազատությունը, եթե դա նախատեսված չէ օրենքով, պետական գաղտնիքի շարքը դասելու այնպիսի տեղեկություններ, որոնք ենթակա չեն նման սահմանափակման:

3. Պետական գաղտնիքը, ինչպես տեղեկություն ընդհանրապես, ազգային ռազմավարական ռեսուրս է: Ելնելով ազգային անվտանգության շահերից՝ պետությունը պարտավոր է մշակել դրա պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր, սահմանել ինչպես պետական գաղտնիքի, այն-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պես էլ այլ գաղտնատեսակների շրջանակները: Ուժեղացնելով գաղտնիության ռեժիմը՝ պետությունը միաժամանակ պարտավոր է հոգ տանել, որ այդ ոլորտում ընդունվող որոշումները լինեն կշռադատված, իրավաբանորեն հիմնավորված և անհարկի դժվարություններ չստեղծեն ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների բնականոն գործունեության համար, չտոնահարվեն քաղաքացիների օրինական իրավունքներն ու շահերը: Տեղեկությունների ոչ խելամիտ գաղտնագրումը հսկայական վնաս կարող է հասցնել ինչպես պետությանը, այնպես էլ հասարակությանը, երկրի առաջընթացին: Ուստի յուրաքանչյուր պետության իրավունքն է և միաժամանակ պարտականությունը՝ ոչ միայն սահմանափակել որոշակի տեղեկությունների շրջանառությունը (պաշտպանել դրանք արտահոսքից), այլև գտնել տեղեկատվության սահմանափակման օպտիմալ սահմաններ: Պետական գաղտնիքի իրավական սահմանակարգը պետք է հանդիսանա այդ օպտիմալ սահմանափակման արտացոլումը:

4. Պետական գաղտնիքի պաշտպանությունը ոչ միայն իրավական, տեխնիկական, այլև մշակութաբանական խնդիր է: Խոսքը հասարակության մեջ տեղեկության, այդ թվում և գաղտնիք կազմող տեղեկության հետ վարվելու, այն ճանաչելու և գնահատելու մշակույթի ձևավորման մասին է: «Տեղեկատվական մշակույթ» հաս-

կացությունն ներառում է անձի կրթվածության, զարգացածության, գիտակցականության ընդհանուր մակարդակը: Ի վերջո մարդը (քաղաքացին) պետք է լավ հասկանա, թե ինչու իրեն թույլ չի տրվում առնչվել այս կամ այն տեղեկությանը, որը պետական գաղտնիք է, գիտակցի դրա օրինականությունը, և այն, որ պետական գաղտնիքի սահմանակարգի արդյունավետ գործունեությունը բուն պետության գործունեության արդյունավետության պայմաններից մեկն է, որ պետական գաղտնիքից չի կարող հրաժարվել ոչ մի պետություն, և դա միանգամայն օրինաչափ է: Ընդհանրապես, մարդկային գործունեության պետական գաղտնիքի սահմանակարգում կատարում է վճռորոշ դեր:

Ամփոփենք.

– պետական գաղտնիքի սահմանակարգն ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղկացուցիչ է, ուստի այն զարգացնելու համար անհրաժեշտ է կատարելագործել ազգային անվտանգության, տեղեկատվական անվտանգության վերաբերյալ օրենսդրությունն ընդհանրապես: Մասնավորապես՝ ընդունել «ՀՀ ազգային անվտանգության մասին» օրենք, «ազգային անվտանգություն» հասկացությունը սահմանել այդ իրավական ակտով, ընդունել բազային օրենք տեղեկատվական ոլորտում.

– պետական գաղտնիքը (գաղտնիք ունենալը) պետության իրավունքն է, իսկ այդ իրավունքի իրագործումը՝ պետության պարտականությունը իր քաղաքացիների, հասարակության հանդեպ:

¹ ՀՀ ՊՏ, 24.01.2002, 6 (181):

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ. N 237, 22.12.2007 թ., էջ 1:

³ Տե՛ս *Քինսկայան Ա. Լ.* Տեղեկատվական անվտանգության արդի մի քանի հարցեր / Պետություն. Պատմություն. Տնտեսություն. Մշակույթ. Երևան, 2009 թ., էջ 83:

⁴ Տե՛ս *Գ. Հարությունյան.* Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003, էջ 3:

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգա-

յին անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Երևան, 2007, էջ 10:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ ՀՀ ՊՏ, 15.07.2009, 35 (701):

⁸ Տե՛ս Государственная тайна и ее защита в Российской Федерации, под общей редакцией М. А. Буса и А. В. Федорова. Санкт-Петербург, 2007, էջ 66:

⁹ Տե՛ս «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» հանդեսի հա-

STATE SECRET PROTECTION AS A COMPONENT PART OF INFORMATION SECURITY

Gor YENGIBARYAN

*National Academy of Science of RA,
Aspirant of the Institute of Philosophy,
Sociology and Law*

In this article the significance of State secret protection in providing national and, particularly, information security in RA is discussed.

On the base of the analysis of some topical problems of national and information security of RA, the author outlines the state secret protection as one of the direction of their protection, and considers the state secret as an important strategical national information resource.

The realia of political and economical antagonism of different states make the problems more and more strained in the

sphere of information and informatization, information relations formation of information resources, their implementation and protection. This is why despite the well-known open international relations and free-availability of information there are, anyway, closed spheres concerning the secrets protected by law, and, first of all, state secret.

Based on this it is concluded that state secret (keeping information in secret) is the right, and its realization is the state's obligation concerning personality and society

The authors has proved that the legal institute of state secret is the whole complex of norms, regulating the social relations in the information sphere. Considering the legislation of that sphere, the author points at some problems, mainly, absence of basic laws, regulating the relations connected with national and information security.
